

եւ մանուկ Յիսուս», բոլոր «Մարիամները եւ Մարթաները», «յիմար կուսանքը», «մարգարէներ», «առաքեալները» եւ բոլոր «սուրբեր», «հրեշտակներ» եւ «սատանաներ» եւ այլ «մտացածիւն» էակներ:

Ապա ԿԱԹՆՏՈՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ աշխարհէն առիւծ, վագր, շնագայլ, ցուլ, փիղ, այծեամ, եղնիկ:

ԹՌՁՈՒՆՆԵՐԷՆ արծիւ, բաղէ, բու, արագիւլ, աքլոր, լոր, կաքաւ, սիրամարդ եւն.:

ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ պատկերացումներէն յիշեմ «ձեռք» մը, «աչք» մը, որոնցմով կ'ուզեն պատկերացուցած ըլլալ «արարչագործ ստեղծողի» կարողութիւնը եւ ամենատեսութիւնը, «գառն» որ «հեզութիւն» է, «աղաւնի» որ «միամիտ անեղութիւն եւ հոգին սըրբոյ» խորհրդանշան է: Ապա սափոր, արեւ, լուսին, աստղեր, ցաւ, խարիսխ, ձուկ, աշտանակ, կանթեղ ի վերջոյ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ պատկերներու մէջ իսպա՞ռ երեւակայական շինութիւններ, աղբիւր, շատրվան եւ այլն, որոնց նշանակել ուղած խորհուրդի մասին այստեղ աւելի երկար կանգ առնելու ժամանակ չի ներեր:

\* \* \*

Երբ գրչագիր կ'ըսենք, պէտք է մոռնալ որ անոնք միայն կրօնի գրքեր չեն: Մեզ հասած են քերականութեան, ճարտասանութեան, փրկութեան, բժշկութեան, պատմութեան, հմայագիտութեան (cabalistica), թըւարանութեան եւ այլ կարգի գրքեր, թէեւ՝ ասոնք՝ իրենց շքեղութեամբ եւ գեղարուեստականութեամբ չեն կրնար համեմատութեան գրուիլ կրօնի մատենաներուն հետ եւ, նուազ մեծազին են:

\* \* \*

ԱՐՈՒԵՍՏԸ ՀՈՎԱՆԱՌՈՐՈՂ ՄԵԿԵՆԱՍ, ՍԻՐՈՂ, ՕԳՆՈՂ

Երկրին «Տէր»երուն, «մեծ»երուն հետ մօտիկ առնչող հոգեւորականութիւնն է, որ արտակարգ տաղանդի տէր մարդիկը առաջնորդըր, մօտեցուցեր է այսպէս կոչուած «բարձր շրջաններուն», ուր, անոնք շատ անգամ, դարձեր եղեր են ասոնց պաշտօնական գեղագրողներն ու պատկերագրողները:

Մեր գրչագիրներու կից յիշատակարանները ցոյց կուտան, որ ասոնք պատրաստուեր են թագաւորնեու, իշխաններու, մէկ խօսքով՝ «մեծ»երու, հասարակական, դասակարգային գիրքով կամ ունեւորութեամբ «կարեւոր» անձնաւորութեանց պատուէրով, ծախքով կամ ցանկութեամբ\*):

Գրչութեան եւ պատկերագրողի հայ վարպետները միշտ ալ վարձատրուեր են: Անշուշտ հետաքրքրական է, թէ ի՞նչ չափով էին վարձատրուած իրենց այնքան տաժանելի աշխատանքին համար: Այս մասին հատուկոր ծանօթութիւններ կան միայն եւ վճարուած փոխարժէքը ընդհանուր կերպով է յիշատակուած յաճախ, եւ ուստի յայտնի է, թէ մագաղաթը, գայն պատրաստողը, գրիչը եւ նկարիչը, նոյնիսկ գրքին կաղմարարը եւ կողբերուն համար թանկագին նիւթեր դործածողները առանձին առանձին ինչ չափերով են գնահատուած:

Գրչագիր մագաղաթներու գինը ամենահին ժամանակները եղեր է մեզ համար անբեւալայելի կերպով բարձր\*\*):

Միջին դարուն գրչագիրը առհասարակ բարձր գին է ունեցեր: ԺԳ. դարուն սովորական մէկ մեծազիր in-folio կը գնահատուէր 4-500 Փրանք:

Գեղարուեստի պատմաբաններ եւ բանասէրներ Եւրոպայի մէջ գտած են յիշատակարաններ, որոնք կը պարզեն գրչագիրներ պատուէր տուողներու եւ դանոնք պատրաստողներու միջեւ դոյութիւն ունեցող յարաբերու-

\*) Վարպետները քաղաքում լինելու տղէտ ու տրդեղ դարձուածքին — որը չգիտեմ ի՞նչպէս ձեռք է այսօրուան մեր խօսակցութեան մէջ եւ որը աղչեցրուցիչ թեթեւ սրտով կը դործածեն մեր այսօրուան լուսադոյն համարուած մարդիկ՝ եւ՝ այդու ալ այլ կերպ արտայայտուիլը ստացեր է քաղցրի նուիրագործում — ես չեմ իշխեր հանդիպած լինել եւ ոչ մէկ անգամ՝ մեր գրչագիրներին յարակից յիշատակարաններուն մէջ:

\*\*) Կ'ըսեն թէ Պլատոն 100 mines, այսինքն 10.000 Փրանք վճարեր է՝ մէկ՝ ոչ շատ անուանի հեղինակի երեք գործերուն արտագրութեան համար»:

«Արիստոտէլ 3 տաղանդ, այսինքն 16,465 Փրանք վճարեր է Speusippe-ի սեփականութիւնը եղած քանի մը հատորին համար»: (Lecoy, էջ 112):